Preparing our students for their future.

GUSD-ի հարգելի անձնակազմ և ընտանիքներ՝

Այս շաբաթ Կալիֆորնիայի կրթության բաժանմունքը ներկայացրել է Կալիֆորնիայի դպրոցների Dashboard ծրագիրը, որը նահանգի դպրոցների գնահատման պատասխանատվության և բարելավման ծրագիրն է՝ 2016-17 ուսումնական տարվա համար: Այս Dashboard-ը, որը նախապես հանրությանն էր ներկայացվել անցյալ գարնանը, փոխարինում է API գնահատականների համակարգին, որը կիրառվում էր անցյալում:

Հպարտ եմ տեղեկացնելու ձեզ, որ այս տարի GUSD-ն՝

- Ավելացրել է անգլերեն լեզու սովորող աշակերտների առաջընթացը
- Ստացել է բարձր կատարողականության մակարդակ նոր՝ քոլեջի/մասնագիտական պատրաստվածության ցուցանիշի համար
- Ցածր է պահել դպրոցից կախակայման ցուցանիշը, բարձր է պահել դպրոցն ավարտելու և անգլերեն լեզվի բարձր իմացության ցուցանիշը բոլոր աշակերտների համար:

Ի հավելումն, մեր կրթաշրջանը բավարարել է բոլոր տեղական ցուցիչները, ներառյալ այն, որ աշակերտներին դասավանդում են ամբողջությամբ վկայագրված ուսուցիչները, նրանց տրամադրվում է կրթական չափանիշերին համապատասխան ուսումնական նյութեր, ինչպես նաև ապահով և մաքուր դպրոցական միջավայր: Կիրառվել են նահանգային կրթական չափանիշերը, ծնողների ներգրավվածությունն ու դպրոցական մթնոլորտը:

Կալիֆորնիայի դպրոցների Dashboard ծրագիրը աջակցում է մեր կրթաշրջանին, որպեսզի մենք հասկանանք մեր ուժեղ կողմերը և բարելավման հնարավորությունները և անհրաժեշտության դեպքում ճիշտ աջակցենք մեր դպրոցներին: Մենք որևէ ջանք չենք խնայի, որպեսզի բացառիկ կրթություն տրամադրենք յուրաքանչյուր աշակերտին:

Սեղմեք այստեղ՝ Կալիֆորնիայի դպրոցների Dashboard ծրագրի արդյունքները տեսնելու համար:

Սեղմեք այստեղ՝ Կալիֆորնիայի դպրոցների Dashboard ծրագրի վերաբերյալ լրացուցիչ մանրամասների մասին տեղեկանալու համար:

Ձեր գործընկերը կրթության ոլորտում՝

Վինֆրեդ Բ. Ռոբերսոն, կրտսեր
Դպրոցների գերատեսուչ